

Թիւնը կայ Նպատ լերան հիւսիսային ստորոտը: Մօրատ գետոյն ձախ ափին վերայ: Չիրաւայ գաւառի արեւմտեան կողմն ունի միաբանութիւնս վանահայր եպիսկոպոս: Եւ ընդարձակ կալուածներ: որոց ծայրն մինչեւ Գալլատոյ ծովակն կը հասնի:

Այս շէն և հիւրասէր վանքը գրեթէ յենարան մի էր Բագրեւանդայ ժողովրդեան համար: մանաւանդ իւր շուրջը գտնուած 4—5 գիւղացւոց համար: սակայն այս երկու տարուան մէջ տեսնելով որ վանքն ևս նեղ գրութեան մասնուած է, ժողովուրդը լքուած աչք տնկած է գաղթականութեան:

Այս վանքը տեղ տեղ սկսուած է քանդուիլ: նորոգելու անհրաժեշտ պէտք ունի: Եւ թաւառայ Ս. Աստուածածին. — Սա այժմ եկեղեցի է թաւառայ գիւղի և վանք Ալաշկերտի գաւառի հայ ժողովրդեան համար: որպէս գիտենք, կը գտնուի արեւմտեան գաւառի արեւմտեան կողմն:

Աւստադնացութիւնը Ս. Աստուածածնի և Ս. Գէորգայ տօնին կը լինի:

Գիւղիս հիւսիսն քիչ բարձր գիրքի մի վերայ կառուցուած է վանքս: սորա կաթուղիէն քանդուած է, որմէրն ցոյց կտան: որ հիւանդի շինութիւն մը ունէր: քանի յիշատակարաններէց կերևի, որ Շինող հայրապետի ձեռքը շինուած լինելու է, նաև պատմութիւնն ևս յիշատակարանի թուականին տպացոյց մէ: «Եւ շինեաց սա և եկեղեցի Սուրբ Աստուածածնի ի վարդապետ և վասն այսոյիս բազում շինութեանց կոչեցաւ իւր յատուկ անուամբ: Ներսէս Շինող: Թէպէտ և զոր մի անգամ շինեցաւ: գրեթէ ամենայն եղծաւ ի հազարացոց»:

Ըստ աւանդութեան վանքս երկու անգամ հրդէհի մատնուած է, մին Ննկթեմուրի միջոցին: երկրորդն մօտ ժամանակներս, եկեղեցւոյս ներքին շինութիւններն և յիշատակարաններն ևս ցոյց կտան: որ երեք անգամ նորոգուած է:

Եկեղեցւոյս հարստային կողմ բացուած զբաւն մօտ կայ մի խոշ քար կանգնած: որոյ ստորին թևի վերայ եռանկիւնաձև կախուած ու մէջը արձանագրուած է. «Ի թուականութեան հայոց 1885 ին կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութեան մարգարէից, որը ընթեռնաբար, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զԶեզ յիշէ»:

(Ար շարունակուի):

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՍԵՆՈՅՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆՍՆ

ԻՎԵՐԴՕՆՈՒՄ:



(Շարունակուիլն) *.

նայելով, որ Պէստալոցցին արդէն եւրոպական հռչակ էր ստացել, որ պէտք է նրան մարդկութեան դատախարակի տիպոսը տար՝ ընկաւ և թշուառ վախճան ունեցաւ այն ուսումնարանը, որ նա հիմնեց իվերգոնում: Այդ անկման պատճառները յիշում է հայր Թիրարը: Ներքին պատճառները բարդուեցին ուսուցիչների անհամաձայնութեանց հետ: Այն սէրը, որ իշխում էր մեր մէջ, ասում էր Պէստալոցցին իր աշխատակիցներին, անյետացել է և պէտք է անյետանար: Մենք չը չափեցինք այն ոյժը, որ պահանջում էր սէրը: Սարսափելի վիճարանութիւնները ստիպեցին Պէստալոցցուն հեռանալ այդ տեղից:

1825 թ. երբ նա 80 տարեկան էր՝ գնաց Նոյհօֆ: Տիկին Պէստալոցցին, որ շարունակ խրախուսում էր իր ամուսնուն՝ վախճանուել էր 1814 թուին իվերգոնում: Պէստալոցցին ապրելով Նոյհօֆում՝ գրեց «Վարատի երգը» և «Լմ ճակատագիրը»: Սա այդտեղ հանգըստանում էր օրական 6 ժամ խի մնացած ժամանակ գնում: այրուքէն էր սովորցնում Ռիւրի ուսումնարանում: Վերջապէս այդ պատկառելի ծերունին վախճանուեց 81 տարեկան հասակում՝ այն տիրութիւնից, որ պատճառեց նրան Ռիւրի գրութիւնները: Ռիւրը այդ գրութեանը յարձակում էր նրա բնաւորութեան, կրօնական զգացմանց և մանկավարժական եղանակների վերայ:

* Տե՛ս. Նախընթաց համարը:

Այս աշխարհում այդ եղաւ նրա վարձարութիւնը այն անսպառ և անձնութեան համար որ նա կատարեալ յօգուտ մարդկութեան բարօրութեան:

Երբ հուրդ ենք տալիս կարգաւ Պէտաղոցցու կենսադրութիւնը որ նկարագրում է նրա մանկավարժական գործունեութիւնը, նրա կրօնական և բարոյական նուրբ զգացմունքները և այն ժամանակ կոնսնէք որ նրան կարելի է համարել կատարեալ մարդու մի գեղեցիկ տիպար:

Հայր Գրէգօր Սէրաբէմ ծնունդ Գուիցարխայի Ֆրէյբուրգ քաղաքում 17 դեկտ. 1765 թ. սկզբնական կրթութիւնն ստացաւ հայրական տանը և այն յիշողութիւնները որոնք օգտւորւել էին նրա մէջ իր հօր տանը՝ շատ վառ էին մնացել նրա սրտում: Կասկած չը կայ որ այդ յիշողութիւնները ներգործած կը լինէին նրա գաղափարների վրայ: Կրթութիւնը նրա համար միայն մէկ նպատակ ունէր այն է՝ երեսային դիտակցարար բարձրացնել և հասցընել մայրական բնազդմանը: Շատ քիչ մարդիկ կան որոնք հասկացած լինէին այն կարևոր գերը որ Աստուած նշանակել է գերդաստանի համար: Մա ասում էր որ հաւատը կապուած է գերդաստանի հետ որովհետեւ յայտնուում է որպէս որդիական զգացմունք և բարձրացնում է գէպի երկնային հայրը: Պէտք է մտաբերել որ այդպէս էր կարծում նա և Պէտաղոցցին:

Սիրարը երբեք չէր կարողանում բուսականանալ նոր դիտութիւններ ձեռք բերելով նա միշտ կարևոր էր համարում մտախոհութիւն սեպհականութիւն դարձնել այն բոլորը՝ ինչ տալիս են դիտութիւնները և զննութիւնը:

1804 թ. Ֆրէյբուրգի վարչութիւնը Հայր Սերարին նշանակեց տեսուչ նախադատարատական ուսումնարանի որ սկզբում 40 աշակերտ ունէր: Հայր Սերարի յաջող վարչութեամբ աշակերտների թիւը հասաւ 300—400-ի: Հայր Սերարը օրնորդաց ուսումնարաններ էլ բանալ տուեց որոնց մէջ աշակերտուհիների թիւը շուտով նոյնպէս 300—400-ի հասաւ:

1809 թ. Պէտաղոցցին խնդրեց դաշնակցական աւագ ժողովից նշանակել մի յանձնաժողով Խվերդօնի ուսումնարանը քննութեան ենթարկելու: Հայր Սերարը մասնակցում էր այդ յանձնաժողովին և հենց ինքն էլ պէտք է գեղեցումն տար: Այդ հանգամանքը մեծ ներգործութիւն ունեցաւ Սերարի մանկավարժական հայեցակէտի վերայ: Խվերդօնում նա կարողացաւ ըմբռնել Պէտաղոցցու մեծ գաղափարները և մտախոհութիւնը որ բացեց նրա առջև մի նոր հորիզոն: Հայր Սերարը Ֆրէյբուրգ վերադառնալով գործադրեց Պէտաղոցցու գաղափարները ամենայն յաջողութեամբ: Կրթութիւնը ենթարկեց նա բանական կարգադրութեան քայլ առ քայլ հետեւելով խելքի զարգացմանը որ Պէտաղոցցին գրել էր որպէս հիմք իր գաստիարակական ձևի: Կրօնի գասատուութիւնը սկսում էր Աստուծոյ յայտնութիւններով և յետոյ աւելի լրացնում ու վերջապէս տալիս էր հասակւոր աշակերտներին կարևոր բացատրութիւնները: Մոյնը կատարուում էր թուարանութեան վերաբերութեամբ, չորս գործողութիւնը սովորցնում էին միևնոյն թուերով, յետոյ նոյնը աւելի մեծ թուերով և վերջապէս միևնոյնը՝ կատարում էին զանազան թուերով: Լեզուն ուսանելու համար հենց առաջին դասում սկսում էին երեսայի ուշադրութիւնը բեւեռել մէկ նախադասութեան վերայ որ արտայայտում էր մի ամբողջ միտք և յետոյ կարելի էր լինում ականել թէ ինչպէս մարդկային խորհումները հեռոցհեռէ բարդուում են որի ամբողջ կազմակերպութիւնների հենց սկզբից որոշած և նախադուշակած էին: Հայր Սերարի ուսումնարանում համաձայն Պէտաղոցցու տուած ծրագրին գասատուութիւնը աստիճանաբար կարգադրուեց և բացի այդ՝ Սերարի առաջնորդութեամբ այդ ուսումնարանն ունեցաւ գործնական և բարոյական կառավարիչ: Թուարանական խնդիրները վերաբերում էին կեանքի սրահանքներին և ծանօթացնում էին սնային տնտեսութեան հետ: Պատմութեան դասերից եղրակացնում էին բա-

բողական հիմունքն աշխարհագրութիւն դաս ապին զարգացնում էին սղարմածութեան քաղաքացիական զգացմանը զեղի մարդկային սերունդը և բացասում էին քրիստոնէութեան շնորհքը օգուտը խնայխոսութիւնն ուսուցանելիս կենդանի կերպով ցոյց էին տալիս ապացուցանում էին Աստուծոյ խնայատութիւնը և մեծութիւնը Լեզուն որպէս մեր մտքերի և զգացմանց արտայայտիչ՝ պէտք է ենթարկուէր ընդհանուր ներդաշնակ զարգացման և լինէր ամենաազգու միջոց որով պէտք է ներմուծուէր երկապի խելքի մէջ բարի և օգտաւետ գաղափարներ զգացմանը և բարոյական ու կրօնական գաղափարներ:

Հայր Փերարը ցանկանալով մարդկ երկապի խելքը կամենում էր մատակարարել նրան օգտաւետ գիտութիւններ և ապ երկապի մրտաճեղու կզանակին զգացմանըին կամքին բառ ազգութիւնը Այս տեղից հետեւում են նրա հետեւեալ խօսքերը որոնք վերնագիր դարձան նրա մանկավարժական գրութեան և որոնք նրա մանկավարժական գաղափարներն են անխափում խօսքերը մաքի համար են իսկ մտքերը սրտի և կեանքի համար: Մանկավարժութեան մէջ իւրաքանչիւր խօսքը պէտք է հասկացուի և իւրաքանչիւր գաղափար պէտք է յարմարեցրած լինի կեանքի գաղափարն պահանջներին:

Հայր Փերարն իր պատասխան աշխատասիրութեան մէջ որի վերնագիրն է «Մանկավարժական գաղափարներ մայրենի լեզուի մասին» ընդունում է որպէս սկզբնաղետ մայրական բընադրումը և որովհետեւ այդ մի բնական զգացմանը է այդ պատճառով էլ արժանի է մեր սիրողը ուշադրութեանը Արեւելային խօսել սովորեցնելիս՝ մայրը ցոյց է տալիս առարկաներ և նրանց անունը տալիս է նա երբեք չի ծանուցում խօսքերն: Այդ խօսքերը երկապին միշտ մի բան են սովորեցնում: Մայրը չի սովորեցնում նրան այդ խօսքերի արտասանութիւնը այլ ցանկանում է միայն մի բան սովորեցնել նա կանգ չի աւելում լեզուի տարրերի վրայ նա աշխատում է միայն սովորեցնել:

Քարեպաշտ և քրիստոնեոյ մայրը կրթում է իր զուակն այնպէս որ նա լինի բարի առաքինի առաւանդաւար: Ահա դրանք են մայրական կրթութեան և սիրտ զլիսար և խաղական գրօշմը: Հայր Փերարը օգտուում է այդ բնական տալքից և իր «Մանկավարժական գաղափարներ»-ում բացատրում է այդ բնադրումը որ յարմարեցրած պէտք է լինի երկապի բոլոր պիտոյքների համար:

Ահա թէ Հայր Փերարն ինչպէս է կարեւորեցնում իր յորինակարգը (սխեման) Այստեղ կրթելու ուղիղ ճանապարհը միշտ բաց է ուրեմն մի ուրիշ ճանապարհ էլ պէտք է դառնայ: Հոգեբանութիւնը դրա վերաբերութեամբ առաջարկում է մեզ հետեւեալ մի նշանաւոր գործնական սկզբունք (մարտիմ)՝ այն է՝ մարդս գործում է ինչպէս նրան հաճելի է և ինչպէս նա հաճում է: Այս երեք խօսքը յայտնում են մեզ այն գաղափարը որ մեզ համար կարեւոր է կանոնադրելու այն աշխատանքը որ մենք սկսելու ենք: Ցանկանում էր խմանալ թէ ի՞նչ պէտք է անել որ երկապն առաւանդաւար լինի և ազնիւ լինի ներշնչեցէր նրան մարդու բարեւելու ուղիւ: Արդ տալիս որովհետեւ մարդ ձգտում է այն բանին որ նրան հաճելի է ի՞նչպէս պէտք է ներշնչել նրանց այս ձգտումները ծանօթացրէր աշակերաններին այդ գաղափարների հետ բացատրեցէր օրինակներով դրանց կարեւորութիւնը և օգուտը կեանքի համար: Գաղափարները և վարքը մտածողութեան արդիւնքն են այս մի օրէնք է: Մակայն այս օրէնքը բացատրութեանց է կարօտ որովհետեւ ողորտութիւնը չէ կարելի կաշխանեղել այլ միայն պէտք է նրան ուղղութիւն տալ: Ազգութիւնն տալու աշխատանքը երբեք չի լինի բոլորովին անյաջող արդիւնքը չի լինի անվերջ (անխաղ): Այդ բառ միջոց է որ պէտք է գնահատել:

Մարդիկ միշտ պէտք է յուսան Աստուծոյ սղարմութեան վրայ որովհետեւ նա միայն կարող է զօրացնել մարդուս կամքը բարեկարգութեան համար:

Մովսէ 1784 - 1846, Հայր Փերարի գրութեան

ները կարող են համարուել Վալիյի մանկա-
փարժութեան ամենալույս յառաջարան Վալի-
լի որ Ալեքսիեւսմ գտնուած ուսումնարանի
տեսուչն էր: մի նոր ուղղութեամբ ուսումնա-
րան չէր հիմնել: այլ շարունակում էր լերա-
րի ուղղութեամբ: որի մանկավարժական գա-
ղափարներն ընդունել էր: Այդ ուսումնարա-
նում որ նշանակուած էր 17—18 տարեկան
երիտասարդների համար: մայրենի լեզուն սո-
վորջնում էին: Հայր լերարի ձեռք ու նրա
անխիղ տեսարաներով: միայն թէ՛ փոքր ինչ
փափաքած: որովհետեւ նրանք աւելի մեծ ա-
շակերանների համար էին նշանակուած: Ահա-
ռին վերաբերեալ գաղափարութիւնն ընթա-
նում էր: մեծ յառաջագիտութեամբ: Այդ տեղ
գտաւ էին տալիս օգտուեալ գիտութիւնների
զարգացնում էին աշակերանների բոլոր ընդառ-
նակութիւնները և ներշնչում էին երիտասարդ-
ներին բարոյական և կրօնական ուղղութիւն:
որոնց յարակցեցին լատիններէն: յունարէն:
գերմաներէն: անգլիներէն: իտալերէն լեզուներ-
բայ թուարանութիւնը: բնագիտութիւնը: աշ-
խարհագրութիւնը: պատմութիւնը: կրօնը և
բարոյագիտութիւնը որքան կարելի էր: Աթէ
այդ բոլորի վրայ սակեացնեմ: հայրական կա-
նանաւոր խնամքը: գերդաստանական կեանքը:
մարդութիւնները ազատ օգուտ մարմինն ամ-
բացներ: համար: կանանամբ Վալիլի ուսում-
նարանի բաւականին ճիշտ պատկերը: Վալիլի
նա միայն կարմակերպեց այդպիսի մի օրինա-
կելի ուսումնարան: այլ և ներկայացրեց գա-
նազան գրութիւններ:

Արեւելի: Աւագուստ — Աիլհէլ — Արեգրիի
Արեւելի: մանկական պարտիզի ստեղծողը:
ծնուեց 21 Ապրիլի 1782 թ: ծնողներին ան-
հայտութեան պատճառով սկզբում նա ընկա-
լատ հասարակութեան մէջ: Սրա երկու եղ-
բայները: որոնք նրանից մեծ էին: սկսեցին
հոգալ նրա մասին: Յետոյ նրա քեռի Յովի-
մանը: որ Ամ քաղաքում պատասխար էր: պար-
տաւորուեց կրթել նրան: Յովիմանը մի պար-
մած և մեղմ բնասիրութեան տէր մարդ էր:
Սա Արեւելիի հետ բարեօրոտութեամբ էր

փարուում և երեխան իրեն սակեալ տեսակ բրա-
նութիւնից ազատ դարձաւ: որ առաջ դորձա-
դրում էին իր վրայ: սովորում էր քաղաքային
ուսումնարանում: թուարանութիւն: աշխար-
հագրութիւն և փոքր ինչ լատիններէն լեզու:

Սա առանձին ձգտումն չունէր գէպի ու-
սումը: այդ պատճառով էլ նրան տալիս մի
անտառայեալի մօտ անտառատածութիւն և
երկրաչափութիւն սովորեալ: Ահա միջոցին
նա կարգում էր բուսարանութեան և երկրա-
չափութեան վերաբերեալ գրքեր: բոյսեր էր
ժողովում: գրասնում էր անտառներում: Սա
շատ էր սիրում բնութիւնը: բոյց և տաւմ
էր: որ այն ժամանակ նա դեռ չէր հասկացել
բուսականութեան ներքին կեանքը: Արեւ տա-
րի անտառայեալի մօտ մնալուց յետոյ ցան-
կանալով ուսումը շարունակել: մտաւ Անայի
համալսարանը: ուր մնաց նա մի տարի և կէս:
լսեց մաթեմատիքայի: հանգարանութեան: ֆի-
զիկայի: քիմիայի: փարական իրաւարանու-
թեան: անտառատածութեան և ծառատա-
րակութեան գաղափարութիւնները: Սրա նիւ-
թական միջոցները շատով սպառուեցին և
չը կարողանալով շարունակել իր ուսումը: հա-
մալսարանում: վերադարձաւ Սրբափէյարախ ուր
նրա հայրը շուտով փախճանուեց: Այդ ժա-
մանակ նա դեռ չէր հետադրբարում մանկա-
փարժութեամբ: նա մտածում էր փարական
կառավարութեան մէջ ծառայել: Պարտաւորուեց
չը գտնելով նա՝ դնաց Արանկի: արա և մտաւ
մի ծառատարակեալի մօտ: Արաժ միջոցից յե-
տոյ նրա բարեկամներից մէկը ծանօթացրեց
նրան Արիւնէր մանկավարժի հետ: որ կառա-
վարում էր մի նորոձե ուսումնարան: ուր
Պետաւոյցու եղանակով (մետոդ) էին սովոր-
ւում: Արիւնէրին մի ուսուցիչ էր հարկա-
ւոր: նա այդ տեղն առաջարկեց Արեւելին:
որ փոքր ինչ տառանուելուց յետոյ՝ ընդունեց
Արիւնէրի այդ առաջարկութիւնը: Այդ պա-
տահեց 1805 թ: Ապրիլին: Մի քանի օրից
յետոյ նա իր եղբայր Արիստափին դրեց հե-
տեւալը: պարմանալի է: թէ որքան իմ այժմ-
եան դորձն ինձ հաճելի է: հենց առաջին

գաւի ժամանակ ինձ թուում էր, թէ միշտ այս գործով եմ զբաղուած եղել և կարծես թէ օրա համար եմ ստեղծուել չգիտեմ թէ ինչպէս բացատրեմ այն բոլորը որ կատարուում էր իմ մէջ: Չեմ կարող երեւոյցներ որ ես մտածած լինեմ մի ուրիշ գործով պարտաւոր: Բայց պէտք է ասեմ որ չէի մշտածել որ ես կարող եմ ուսուցիչ դառնալ: Քանի որ դաս եմ ասլիս՝ ես ինձ զգում եմ ինձ համար նախասահմանուած վիճակի մէջ:

Երբ Գրիւնները Ֆրէօրէյին պատմեց Պէստալցցու մասին նրանում՝ ծագեց մեծ ցանկութիւն տեսնել այդ մեծ մանկավարժին գործի մէջ: աշակերտներով շրջապատուած: Հէնց որ ամառուան դասերը վերջացան՝ նա ոտով զնայ Խէրգօն: Վերադառնալուց յետոյ նա աւելի աշխոյժով էր պարտաւոր աշակերտների հետ և աշխատում էր գործադրել Պէստալցցու մանկավարժական եղանակները: Տարուայ վերջին քննութեան ժամանակ նրա աշակերտներն այնպէս յաջող քննութիւն տուին որ Գրիւնները շնորհաւորեց նրան: Ֆրանկֆուրտ գալուց փոքր ինչ յետոյ նա յանձն առաւ դերմաներէն լեզուի և թուարանութեան մասնաւոր դասեր տալ մեծատուն Հօլցհաուզէնի երեք որդուն: Դուրս գալով Գրիւնների ուսումնարանից՝ մտաւ այդ պարտնի գերդաստունը որպէս անային ուսուցիչ և շուտով Հօլցհաուզէնից համաձայնութիւն ստացաւ իր այդ երեք աշակերտների հետ Խէրգօն գնալու: Այդ երիտասարդները պէտք է ուսանէին Պէստալցցու մօտ: Ֆրէօրէյը յաճախելով այդ նշանաւոր մանկավարժի ուսումնարանը՝ սովորեց նրանից այն՝ ինչ որ պակասում էր նրան: Ֆրէօրէյն իր աշակերտների հետ 2 տարի մնաց Խէրգօնում:

Իր կենսագրութեան մէջ, որ նա գրեց 1827 թ. հաստատում է, թէ նա ներքին միութիւն չը գտաւ Պէստալցցու ուսումնարանում և և նրա աշխատակիցների մէջ, բայց և աւելացնում է, թէ այն ժամանակը որ նա անցրեց Խէրգօնում՝ վճռական էր նրա կեանքի համար:

Նա նորից ցանկացաւ համալսարան մանկել: Երբ Ֆրանկֆուրտ վերադարձաւ (1810 թ.), ցանկանում էր դուրս գալ Հօլցհաուզէնի անից, որ զնայ Վէստառնդէն: Բայց ստիպուած էր էլի մէկ տարի շարունակել իր ուսուցչութիւնը: Մանկավարժութեան և կրթութեան վերաբերեալ այն թերի գիտութիւնը, որ ես ունեի, ասում է Ֆրէօրէյը, այն աստիճան չնչին էին թուում ինձ, որ ես ինձ երջանիկ էի համարում երբ կարողացայ թողնել իմ ուսուցչական պաշտօնը:

1811 թ. յուլիսի սկզբում Ֆրէօրէյը մտաւ Վէստառնդէնի համալսարանը:

1811 թ. ամառը յայտնուեց այն դիսուոր մեծ ասպըր, որ գրաւեց Ֆրէօրէյի ուշադրութիւնը և ստիպեց նրան պարտաւոր աստեղաբաշխութեամբ, որպիսի ուսումնասիրութիւնը յղացրեց նրա մէջ այն գաղափարը, որ նա անուանում է *ֆէրսպիւն օրէն* (le loi speriguo) և որ նշանակում է կրթութեան, ամբողջութեան, կատարելութեան, միութեան, միաձեւութեան օրէնք: Այդ օրէնքը նա ընդունեց որպէս ընդհանուր ֆիզիքական և բարոյական օրէնք: Այդ բոլորից սկսած հաստատուեց նրանում որ տիեզերքն ունի միութեան ընդհանուր (unité universelle) գործարանաւոր կապ, որ միացնում է բոլոր իրերը և ենթարկում է ամէն ինչ մի օրէնքի: Նա համոզուեց, որ գունդն է (sphere) սկզբնական միութեան ախարար, խորհրդաւոր նշանը (symbole), որով արտայայտուում է այդ աստուածային օրէնքը: Նա ասում է, թէ սկզբում բոլոր երկնային մարմինները կազմել են մէկ տիեզերական գունդ, որ բաժանուել է զանազան մասերի և այդ մասերը կրկին զանազան մեծութեան գնդերի ձև են ստացել: Այդ գնդերի ձևերիցն էլ հետեւում է, որ գրանք միասին առաջ մի գունդ են կազմել:

Գունդն ընդհանուր ձևն է, տիեզերքի մասերի ձևն է, անհատական ձևն է, այսինքն տիեզերքի ընդհանուր անհատական ձևն է: Ամէն մի գունդ ներկայացնում է կատարելութիւն, ամբողջութիւն, իսկ որպէս ընդհանրու-

Թեան (տիեզերքի) մասն՝ կազմում է թերու-
թիւնն անկատարութիւնն: Արդէս զի մի մար-
մին կայմակերպի իր զնդական ձեւը՝ նա պէտք
է ինքը ձգտի արտայայտելու իր գոյութիւնն
իր մէջ և ինքը պէտք է ձգտի գէպի միութիւ-
նը, անհատականութիւնը, այլակերպութիւնը
(ձևափոխութիւնը):

Ամէն մի էակ ինքն է ձգում այդ երեք ա-
ռանձնայատկութեանցը՝ որոնցով նա ինքն ի-
րեն որոշում է և դասնում է ճշմարտին զիւ-
րենկալ:

Հէնց զրանցով է գունար հասնում իր նը-
պատակին՝ իր բարձր զիրքին (նշանակութեա-
նը) որպէս ընդհանրութեան մի զործարանա-
ւոր մասնիկ:

Մարդկութեան հասարակ առաւելութիւնը
հէնց նրանում պէտք է լինի որ նա աշխա-
տի մշակել զարդացնել ձևակերպել, կատա-
րեղարծել, ամբողջացնել ամենից առաջ ի-
րեն յատուկ զնդական բնաւորութիւնը (իր
առանձնական բնաւորութիւնը), իր զնդական
(ընդհանուր) էութիւնը և յետոյ որպէս մարդ-
կութեան մի մասնիկ՝ կատարեղարծել իր ա-
ռանձնայատկութիւնը, անհատականութիւնը,
որ նա ինքն իրեն որոշի ձևակերպի իրեն յա-
տուկ բնաւորութիւնը, իրենից ձևացնի մի
ամբողջութիւն, կատարելութիւն, աստեղա-
բաշխական լեզուով խօսելով՝ կարելի է ասել,
ձևացնի իրենից կրթութիւն, ամբողջութիւն,
կատարելութիւն, միութիւն:

Աշխատել զարդացնելու մի էակի զնդական
բնաւորութիւնը՝ կը նշանակէ կրթել այդ
էակին:

Գնդական օրէնքը ամբողջ, իսկական կրթու-
թեան հիմնական օրէնքն է:

Ֆրէօրէլի խորհրդաւոր զաղափարները զըն-
դական օրէնքի վերարբերութեամբ՝ կազմում են
նրա մանկավարժական ուսման հիմքը, որ ինք-
նուրոյն և անձնական է:

Բէրլինի հանքարանական թանգարանում
որպէս պրօֆէսորի օգնական ժամերով շա-
բուանակ աշխատելով և թիւրքերի ձեւերը ու-
սումնասիրելով, ֆրէօրէլը մտածում էր բիւ-

րեզների վրայ իշխած օրէնքների մասին:

Մենք տեսնք, թէ որքան նա անհէժեթ,
անսովոր կերպով որոշեց զնդի յատկութիւն-
ները և ընդունեց երկրաչափական ձևերի նը-
շանաբանական (symbolique) զաղափարները, և
ինչպէս և միշտ աշխատում էր բոլորը վերա-
ծել վերադրել մի բարձրագոյն միութեան, որ
պէտք է կազմեր սկզբնական ու վերջնական
երկրորդական ձևերի:

Բէրլինում նա նորից, բայց հաստատապէս
վճռեց նուիրել իրեն մանկավարժական գոր-
ծին: Այդ միջոցին, երեւի 1816 թ. ամառը
հրաւիրեցին նրան Ստոքհոլմ՝ որպէս հան-
քարանութեան պրօֆէսոր, բայց նա հրաժար-
ուեց այդ պաշտօնից:

Ֆրէօրէլի եզրայր Ֆրիտսօֆը, որ նրա և-
րիտասարդ ժամանակ նրա պաշտպանն ու ա-
ռաջնորդն էր, վախճանուել էր 1813 թ.
թոյնելով իր այրին և 3 որդի: Ֆրէօրէլը
վճռեց յանձն առնել այդ երեխաների կրթու-
թիւնը և հիմնել Գրիգէնհէյմում մի ուսում-
նարան, որտեղ զրանք լինելու էին առաջին
աշակերանները: Միւս եզրօր երկու որդիքն էլ
յանձնեցին նրան կրթելու և 13 նոյեմբ. 1816
թ. Ֆրէօրէլը բացեց իր ուսումնարանը՝ ընդ-
հանուր դերմանական կրթութիւն տալու հա-
մար: Նա հրաւիրեց Բէրլինից իր երկու բա-
րեկամներին — Լանդէտալին և Միդլէնդրօֆին
որպէս օգնականներ, որոնք երբեմն նրա աշա-
կերաններն էին եղած: Վարձ միջոցից յետոյ
այդ ուսումնարանը Գրիգէնհէյմից տեղափո-
խեցին Ֆէլլհատու: Այդ ժամանակ նրա աշա-
կերանների թիւը 12 էր:

Արօնական ուսմունքն առաջին անգն էին բըւ-
նում այդ ուսումնարանի ծրագրում: Ֆրէօրէլն
ասում էր, որպէս զի կրթութիւնը պաղարեր
լինի, պէտք է յենուած լինի կրօնի վերայ,
«Աստուած է սկիզբն ու զեկավարը բոլոր աի-
եղերքի: Աստուած է ստեղծել ամեն ինչ՝ որ
տեսնում ենք»:

(Շարունակելի):

ԲՏ. ԼԵՒՈՆ ՏԵԳՐԱՆԵԱՆ.